Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

SDA Strategic Development Agency
Strategies for Development

WITH FUNDING FROM
AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ՀԱՐԱՎ-ՀՅՈՒՍԻՍ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի 100 բնակավայրեր

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝ Ավստրիական Զարգացման և Համագործակցության ծրագրային միավոր Ավստրիայի Զարգացման Գործակալություն, Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալություն

ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է՝ «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի մարզպետարաններ, Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ)

ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ՝ դեկտեմբեր 2017–2020 թթ.

«Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» ՀԿ կողմից վերջին 10 տարիների ընթացքում Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում իրականացված անասնապահության զարգացման ծրագրերի արդյունքներն և ձեռք բերված փորձը:

Ծրագրի երկարաժամկետ նպատակն է նպաստել Հայաստանի հյուսիսային մարզերում անասնապահությամբ զբաղվող համայնքների ներառական և կայուն գյուղատնտեսական աճին՝ մասնավոր հատվածի զարգացման խթանման և հայ-վրացական տնտեսական հարաբերությունների ակտիվացման միջոցով:

Սույն ծրագրի թիրախում են ՀՀ հյուսիսային մարզերի՝ (Շիրակ, Լոռի, Տավուշ և Գեղարքունիք) անասնապահությամբ զբաղվող 100 գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունները, կաթի և մսի արժեշղթաների դերակատարները և տեղական ինքնակառավարման մարմինները: Ծրագրի նպատակն է համակարգային փոփոխությունների և մսի ու կաթի արժեշղթաներում գործունեություն իրականացնող մոտ 200 տեղական մասնավոր հատվածի եւ ՏԻՄ-երի ներկայացուցիչներին ցուցաբերվող կայուն և ներառական աջակցության արդյունքում նպաստել նրանց կարողությունների զարգացմանը, և շուկայի դերակատարների միջև համագործակցության ու կապերի խթանմանը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ՝

Անասնապահությամբ զբաղվող ֆերմերների համար կաթի ու մսի տեղական և արտահանման շուկաների հասանելիության բարելավմանը: Այս նպատակով նախատեսվում է.

- ձևավորել և ամրապնդել կապերը կաթի և մսի արտադրությամբ զբաղվող ֆերմերների և գնորդների միջև,
- նվազեցնել թարմ և վերամշակված անասնաբուծական ապրանքների փոխադրման շղթայում առկա խոչընդոտներն ու ընդլայնել պատրաստի արտադրանքի արտահանման հնարավորությունները:

Անասնապահությամբ զբաղվող ֆերմերների համար գյուղատնտեսական պարագաների և բիզնեսի զարգացման ծառայությունների հասանելիությանը և տարածաշրջանային սերտ կապերի ձևավորմանը: Այս նպատակով նախատեսվում է.

- կարողությունների զարգացման և սահմանափակ ներդրումային նախաձեռնությունների արդյունքում շահառու բնակավայրերում բարելավել անասնաբուժական և արհեստական սերմնավորման ծառայությունների, ինչպես նաև գյուղատնտեսական պարագաների մատակարարման հասանելիությունը:

Անասնապահությամբ զբաղվող ֆերմերների, տեղական ինքնակառավարման մարմինների և գյուղատնտեսական արտադրողների կարողությունների հզորացմանը: Այս նպատակով նախատեսվում է.

- թիրախային համայնքներում ներդնել բնական կերհանդակների կայուն կառավարման մոտեցումներ և գործառույթներ՝ երկարաժամկետ հեռանկարում նպաստելով անասնապահության ճյուղի կայուն զարգացմանը:

ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԵՆ՝

- <u>Ներառական շուկայական համակարգերի զարգացման</u> սկզբունքների կիրառումը՝ անասնապահության և ծառայությունների մատուցման ոլորտներում կայուն և տևական փոփոխություններ արձանագրելու նպատակով:

- <u>Գենդերային հավասարությունը</u> խթանելու նպատակով համապարփակ մոտեցման կիրառում՝ աջակցելով կին և տղամարդ ֆերմերներին՝ բարձրացնելու իրենց արտադրական գործառույթների արդյունավետությունը, ինչպես նաև ընդլայնելու կանանց դերակատարումը ֆերմերային ու համայնքային մակարդակներում:

«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» (ՌԶԳ) ՀԿ
Գլխամասային գրասենյակ

ՀՀ, ք. Երևան 0007
Այգեստան 5-րդ փող., #3/1
Հեռ.՝ (+374 10) 51 75 28
Բջջ.՝ (+374 93) 33 55 84
Կայք՝ www.sda.am
Էլ. փոստ՝ sdaoffice@sdaoffice.com